


ԱՐԺԱԿԱՆՈՂՋ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԲԺԻՇԿ Ա. Լ. ԿԱՅԱԶԿԻՆ

ԺԱՎՈՐ
ՏԻՖԵ
ՅԵՎՆԻՄԱԴԵՄ
ՊԱՅԲԱՐԵԼՈՒ
ՄԻԶՈՑՆԵՐԸ



30 JUL 2010

ԱՐՏԱՎԻ Ա. ԽՈՂՋՅ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

616.9

4-54

ԲԺՇԿ Ս. Լ. ԿԼՅԱԶԿԻՆ

ՄՐ.

Բ Ծ Ա Վ Ո Ւ Տ Ի Ֆ Լ
ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր Լ

Թարգմ. Հ. ԲՈՂԻԱՆՅԱՆ

ՀՀ-1502

ԱԶՕՎ-ՍԵՎՏՈՎՑԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Թուառով-Դոն - 1935



22 MAY 2013
00 JUL 2013

6992

ԲՇԱՎՈՐ ՏԻԳԸ—ՑԱՐԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՐԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Ե

Բծավոր տիկը շատ լավ հայտնի յե մեզ:
Տասնհինգ տարի առաջ մեղ մոտ միլիոնա-
վոր մարդիկ հիվանդացան տիփով. այդ հի-
վանդների տասերորդ մասը մեռավ: Ներկա-
յունս բծավոր տիկը համարյա գոյություն
չունի ու յերեվան ե գալիս յերբեմն միայն
և հատկապես ձմեռվա ամիսներում: Սակայն
մեղ անհրաժեշտ ե իմանալ, թե ինչ հիվան-
դություն ե դա և ինչպես են նըանով վա-
րակվում, վորպեսդի կարողանանք իսպառ
վերացնել այդ հիվանդությունը:

Բծավոր տիֆը մի սարսափելի հիվանդություն է, վորով նախկին ժամանակներում հիվանդանում և յին ազգաբնակության հսկայական մասսաները; Բծավոր տիֆն առանձ

5071-53



Նապես հաճախակի յերեվան եր գալիս պատերազմների ժամանակ ու դրա համար եր նա կոչվում եր «պատերազմական տիֆ»։ Պատմությունից հայտնի յե, վոր 1812 թվականի պատերազմի ժամանակ ֆրանսիական և ռուսական բանակներում բծավոր տիֆով հիվանդացան հարյուր հազարավոր զինվորները 1854 — 1855 թվականներին, այսպես կոչված Դրիմի պատերազմում, բանակն ավելի շատ կորուստ ե ունեցել բծավոր տիֆի պատճառով, քան թե վերերի հետեւանքով։ Նմանապես 1914 — 1918 թվականների իմպերիալիստական պատերազմների ընթացքում բծավոր տիֆը սոսկալի կոտրած առաջ առաջ բերեց ցարական Ռուսաստանում, անցավ թիկունքը և տարածվեց քաղաքացիական բնակչության միջև։

Դեռ հին ժամանակներից նշված ե, վոր բծավոր տիֆի համաճարակները կապված են սովերի ու բանտերի հետ։ Դրա համար ե, վոր բծավոր տիֆը կոչվում ե նաև «սովի և բանտի տիֆ»։

Շնորհիվ քաղաքի ու դյուղի չքավոր բնակչության աղքատիկ ու համախմբված կյանքին, բծավոր տիֆն իր զարգացման համար արգավանդ հող եր գտնում ցարական

Ռուսաստանում։ Դրա հետ միասին, բծավոր տիֆով հիվանդանալուն նպաստում եյին յերկրի կուլտուրայի ցածր աստիճանը և ազգաբնակության համարյա գլխովին անգրագիտությունը։ Բծավոր տիֆը, վոր չափազանց վարակիչ հիվանդություններից մեկն ե, այսպիսի բարենպաստ պայմանների շընորհիվ լայն ծավալ եր ստանում և համաճարակների, այսինքն մասսայական վարակիչ հիվանդությունների՝ բնույթ ընդունում։

Բծավոր տիֆի տարածմանը նպաստում եր նաև այն, վոր բժշկական ոգնությունն ել բավարար չեր։ Բծավոր տիֆի դեմ մղվող պայքարը հիմնականում հանգում եր այն բանին, վոր քաղաքներում հիվանդների մի մասին մեկուսացնում եյին հիվանդանոցներում և բժշկում եյին այնտեղ։ Իսկ մեծագույն մասը մնում եր բոլորովին անխնամ, մանավանդ գյուղերում, ուր բծավոր տիֆը 2 — 3 անգամ ավելի մեծ կոտորած եր անում, քան քաղաքներում։

Ահա թե ինչու բծավոր տիֆը հաստատուն բույն եր դրել իր համար ցարական Ռուսաստանում, այնինչ մյուս յերկրներում այդ հիվանդությունն արդեն վերացված եր։

ԲՇԱՎՈՐ ՏԻՖԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ
ՃԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՃԵՏՈ

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ ծայրը առաջ բժավոր տիֆի համաձարակը շարունակվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո և տեսվեց քաղաքացիական պատերազմի ամբողջ ընթացքում։ Տասնյակ միլիոն աշխատավորներ վարակվեցին այս հիվանդությամբ։ Բժավոր տիֆի համաճարակն սպառնում եր նույնիսկ հեղափոխության նվաճումներին։ Հարկավոր եր ձեռք առնել բացառիկ միջոցներ։ Խորհրդային իշխանությունը, վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրատարակում ե բժավոր տիֆի դեմ վճռական պայքար մղելու հարցին վերաբերյալ մի քանի վորոշումներ Իր յելութներից մեկում Վլադիմիր Իլյիչն ասում եր. «Ընկերներ, բոլոր ուշադրությունը դեպի այս հարցը. կամ վոջիլները կհաղթեն սոցիալիզմին, կամ սոցիալիզմը կհաղթի վոջիլներին»։ Ընկ. Լենինը կոչ եր անում՝ «վերացնել ուռւս յերկրից բժավոր տիֆը — անկուտտուրականության, աղքատության, խավարի ու տգիտության այդ հետևանքը»։ Զեռք առնված այս բոլոր միջոցների

շնորհիվ հաջողվեց իջեցնել բժավոր տիֆով հիվանդացողների թիվը ու վերջ դնել համաճարակին։

Կուսակցության և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավորությամբ մեր Միությունն ահազին հաջողություններ ձեռք բերեց յերկրի ինդուստրացման ու կոլեկտիվացման ասպարիզում։ Խոշոր են մեր հաջողություններն ինչպես աշխատավորների բարեկեցության բարձրացման, այնպես ել մեր կուլտուրայի աճման գործում։ մեծ նվաճումներ ենք ունեցել նաև առողջապահության բնագավառում։ Սակայն աշխատանքի և կենցաղի առողջացման համար դեռ շատ բան ունենք անելու. մասնավորապես՝ ամբողջովին պետք ե վերացնել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպես բժավոր տիֆն ե։

Առաջին հնգամյակի պլանի կատարումով արդեն իսկ ուժասպառ ե արված բժավոր տիֆը մեր Միության մեջ։ Միության ամբողջ աերիտորիայում և մասնավորապես մեր յերկրամասում առողջապահության որդաններն ահազին աշխատանք են տանում բժավոր տիֆի մնացորդները վերացնելու գործում։

Այս պայքարը հաջողություն կունենա
մանավանդ այն գեաքում, յեզր նրանում
գործունյա մասնակցություն կունենան բան-
վորների և կոլխոզնիկների լայն մասսաները:
Բայց դրա համար պետք ե բոլոր աշխատա-
վորներն ել իմանան, թե ինչ բան ե բժա-
վոր տիֆը, ինչպես են նրանով վարակվում
և թե վորոնք են նրա գեմ պայքարելու մի-
ջոցները:

ԳԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐԻՉԸ ՎՈՃԻԼՆ Ե


Ֆրանսիացի գիտնական Նիկոլն ապացու-
ցել ե, վոր բժավոր տիֆով հիվանդին խայ-
թող վոջիլը վարակիչ ե զառնում, ու նրա
խայթոցից կապիկի մեջ կարող ե առաջա-
նալ մի հիվանդություն, վոր նման ե մար-
դու բժավոր տիֆին:

Ապա մի շարք դիտողություններից պարզ-
վել ե, վոր բժավոր տիֆը վոջիների միջո-
ցով կարող ե մեկից մյուսին փոխադրվել.
բայց բոլոր վոջիներն ել միատեսակ վտան-
գավոր չեն, այլ միայն այն վոջիլը, վորը
խայթել ե բժավոր տիֆ ունեցող հիվանդին.
այդպիսի վոջիլը, 4—5 որ անցնելուց հետո,

դառնում ե վարակիչ: Նրա փորոտիքում պա-
րունակվում ե բժավոր տիֆի վարակը:

Միկրոսկոպի միջոցով հետազոտելով վա-
րակված վոջիլն, Դա. Ռոխա. Լիմա գիտնա-
կանը նրա ստամքում ու փորոտիքում
գտել ե մարմնիկներ, վորոնք իրենց ձեզով
մարմնամարդական յեր-
կաթաձողերի (գիրերի)
յեն նման, գիտնական-
ների մեծ մասի կարծի-
քով հիվանդության պատ-
ճառն այդ մարմնիկներն
են: Վարակված վոջիլը
բժավոր տիֆի վարակը
փոխադրում է խայթե-
լիս կամ այն ժամանակ,
յերբ նրան ջարդում են
ու նրա բովանդակու-
թյունը ներշգավում ե կաշվի տակ՝ քորվելու
և ճանկուելու հետեւանդրով:

Մարդու վրա յերեք տեսակ վոջիլ ե լի-
նում գլխի, հագուստի և ցայլային (ամո-
թուցքի ճակատամազերում). բժավոր տիֆի
փոխադրիչը հանդիսանում ե հագուստի և
գլխի վոջիլը, և ավելի հաճախ՝ առաջինը:
Պարզվել ե, վոր բժավոր տիֆի վարակը հի-



վանդի արյան մեջ ե լինում: Հիվանդին
կծելիս՝ վոջիլը վարակվում ե և տպա իր հե-
տեյալ խայթոցներով վարակը փոխաղբում
ե առողջների վրա:

Հիվանդի բոլոր արտազատումները՝ կղկը-
դանքը, մեղը, խորիսը (բաղամը), քրտինքը
վարակիչ չեն: Յեթե հիվանդի վրա վոջիլ
չկա, ապա ուրեմն այդ հիվանդը վարակիչ
չե: Իմալերիալիստական պատերազմի ժամա-
նակ գերմանացիները հետեյալ փորձն արե-
ցին ճամբարներում (լագերներում) բծա-
վոր տիֆով հիվանդ ոռւս ռազմագերի-
ների վրա: Վոջլազերծ անելով բծավոր
տիֆով հիվանդ ոռւս ռազմագերիներին,
նրանց տեղափորում եյին առողջ ռազմագե-
րիների հետ միևնույն բարակում: և վորով-
հետև վոջիլ չկար, բծավոր տիֆով հիվան-
դացման նոր դեպքեր այսու չեղան:

Այսպես, ուրեմն, բծավոր տիֆը փոխաղ-
բողը վոջիլն ե, և միայն վոջիլը:

Ջմեռը մարդիկ ավելի հաստ են հագնը-
վում, ավելի քիչ են լվացվում, ապրում են
ավելի համախմբված: ու այս բոլորի շնոր-
հիկ բարենպաստ պայմաններ են ստեղծվում
վոջիլների բազմացման համար: Ահա թե
ինչու բծավոր տիֆով հիվանդանալու դեպ-

քեր ձմեռները սովորաբար ավելի շատ են
լինում:

ՎՈՃԻԼՆԵՐԻ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ

Հագուստի վոջիլն ապրում ե ճերմակեղենի
և հագուստի ծալքերում: Նա ավելի հաճախ
տեղափորվում ե այն տեղերում, վորոնք ա-
վելի մոտ են կաշում մարմնին—ոձիքի վրա
և գոտկատեղում: Այս տեղերից վոջիլը սո-
ղալով, որը 2—3 անգամ, անցնում ե տի-
րոջ մարմնի վրա՝ արյուն ծծելու համար: Նա
ածում ե իր ձվիկ-անիծները, վորոնք մի
տեսակ մածուցիկ նյութով պինդ ամրանում
են գործվածքի մազախավերում կամ կաշվի
վրայի մազիկներում: Վոջիլների անիծները
լինում են վերժակներում, խոտկուններում
(մատրացներում), ներքնակներում (դոշակ-
ներում), տակը փոփածքի ծղոտներում և
այլն: 37 աստիճանում (վոր տռողջ մարդու
սովորական ջերմաստիճանն ե), անիծից 4—5
որում զարգանում ե թրթուրը. սա նման է
վոջիլին և համարյա թափանցիկ ե, նկատելի
յեն միայն նրա սև աչքերը. ձվից դուրս
գալուց հետո կես ժամ անցած թրթուրն
արդեն ծծում ե մարդու արյունը: Յերեք
անգամ մազաթափիվելուց հետո թրթուրը


վոջիլ եւ դառնում: Թրթուրը վոջիլ եւ դառնում 15—18 որում:

Նա ապրում ե 32—60 որ (վոլքան բարձր ե ջերմաստիճանը և լավ ե սնունքը, այնքան կարճ ե կյանքի տեղությունը). այդ ժամանակաշրջանում նա կարող ե ածել 300 ձվիկանիծ:

Գլխի վոջիլը նույնպես կարող է բծավոր տիֆ փոխադրել, բայց այս գեղղում նրա հասցրած մասը շատ ավելի քիչ ե, քան թե հագուստի վոջիլը վորուստի վոջիլնը, վորովինետես նա տիրոջից չե հետանում:

Իսկ հագուստի վոջիլը շատ տաք չի սիրում, և հենց վոր տիրոջ ջերմաստիճանը բարձրանա, նա ճերմակեղենի վրայից անցնում ե հագուստի ու նույնիսկ վերնազգեստի վրա, վորով և հեշտանում ե նրա՝ առողջ մարդկանց վրա փոխադրվելը:

12



Հագուստի վոջիլ անհերթ:
1 — կափարիլ, 2 — մազը,
3 — սոսնձանման զանգվածը

Վոջիլքան հեռու կարող ե սողալ վոջիլը:

Հագուստի վոջիլն ընդունակ ե մեկ րոպեյում 30 սանտիմետր տարածություն անցնել: Վոջիլն իր տիրոջ հետ հեռավոր տարածություններ ե գնում. մարդն ուղեղվորվում ե յերկաթուղով, նրա հետ գնում ե նաև վոջիլը, և այս յեղանակով ել տարածում ե բծավոր տիֆը:

Վոջիլներն արյունով են սնվում. խայթելիս՝ վոջիլը վերքի մեջ թափում ե իր թուքը, վորը գրգռում ե մաշկը, առաջ ե բերում քոր և ճանկուցներ: Այդ թքի հետ ե, վոր բծավոր տիֆի վարակն առողջ մարդու մարմնի մեջ ե ընկնում: Յեթե խայթոց ստացած մարդը քորվելիս տրորում ե վոջիլն ու ճանկուցված տեղերից իր կաշվի տակ ե տանում նրա միջի յեղածը, ապա ուրեմն նա, ինչպես արդեն ասել ենք, նույնպես վարակվում ե բծավոր տիֆով:

Սահմանված ե, վոր վոջիլներն ոժտված են հոտոտելիքով և զգում են մարդկային մաշկի հոտը: Վոջիլը սուր հոտեր չի սիրում և դժվարությամբ ե սողում ճարպ կամ յուղ քսված մարմնի վրայով: Յեթե վոջիլը սոված ե, նա մարդուն կծում ե նույնիսկ և այն գեղքում, յերբ մաշկը յուղված ե նաֆ-

տալինով, անանուխի ու սամիթի յուղով և
այլ նյութերով, վորոնց հոտը վոջիները չեն
տանում:

Նմանապես ամեն անգամ չի ոգնում թեա-
ծալքի և ոճիքի մոտ մարմին մեխակի յուղ
քսելը, և վոջիները՝ չնայած դրան՝ կարո-
ղանում են մտնել հագուստի տակ: Վճռքան
ել պինդ կապես թեվիդ բերանը, դրանով
ամեն անգամ ապահոված չես լինի քեզ, վո-
րովհետեւ վոջիլը շատ ուժեղ եւ:

ԽԶՊԵՍ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ԲՇԱՎՈՐ ՏԻԳԸ

Վարակվելուց հետո մարդն իսկույն չի հի-
գանդանում, այլ կծելուց մոտավորապես մի
10—14 որ անցնելուց հետո: Նախ սկսում
ե դողացնել, և տաքությունն արագորեն,
միքամի ժամփա ընթացքում, գնալով ավե-
լանում ե, ջերմաստիճանը հասնում ե 39—40
աստիճանի, հիվանդի դեմքն ու աչքերը
կարմրում են, շատ բարձր ե լինում տա-
քությունը, հողերում և ամբողջ մարմնում
ցավեր են առաջանում, գլուխն սկսում ե
սաստիկ ցավել հիվանդը սովորաբար անկո-
ղին ե ընկնում: Հիվանդության Յ—Յ. բ. դ.
որը իրանի, ձեռքերի ու վոտքերի վրա բժեր
են առաջանում (դրա համար ե, վոր այս

հիվանդությունը «բծավոր աիֆ» ե կոչվում):
Հիվանդությունն ընթանում ե շատ ծանր
կերպով: Հաճախ խանգարվում ե հիվանդի
գիտակցությունը, վրա յե հասնում գառան-
ցանքը, մոլեզին վիճակը: Դիտվում ե հազ և
շնչառության որգանների խանգարում, հար-
վածվում ե նաև սիրտը: Հիվանդությունը
սովորաբար տեվում ե 2 շաբաթ: Ավելի ծանր
դեպքերում մարմնի վրա դուրս տված ցանը
արյան լճացման ե փոխվում. առաջանում ե
մարմինի ցնցումև զղաձգություն, խանգարվում
ե խոսելու և կուլ տալու կարողությունը:

Մահը կարող ե հասնել սրտի թուլությու-
նից կամ ուղեղի հարվածումից:

Ցուրտ յեղանակներին բարդություններ են
առաջանում շնչուղիների բնագավառում,
այսինքն՝ թոքերի բորբոքում: Բացի դրանից
հիվանդությունը բարդանում ե գանգրենա-
յով, այսինքն առաջանում ե քթի ծայրի,
վոտքի մատների, վոտքի թաթի և նույնիսկ
յերկու վոտքերի փտախտը: Վորովհետեւ հի-
վանդները շուտ-շուտ են միզում և իրենց
տակը թրջում, դրա համար նրանց գավակին
կարող են պառկելախոցեր գոյանալ: Հիվանդի
լեզուն և շրթունքները չոր են ու ճաքճաք-
ված, կարող ե տեղի ունենալ մերձական ջա-

յին գեղձի բորբոքում: Բծավոր տիֆից հետո
յերբեմն մնում են հոգեկան խանդաբարումներ,
կաթվածներ, լսողության ու տեսողության
խանդաբարումներ: Ընդհանրապես, ինչպես ցույց
են տալիս դիտողությունները, տասը հի-
վանդից մեկը մեռնում է, մեկն ել մնում ե
անտշխատունակ:

Գիշավորապես հիվանդանում են 15 — 40
տարեկան հասակի մարդիկ, և ավելի հաճախ
տղամարդիկ, քան թե կանայք:

Բծավոր տիֆով հիվանդներն ու հիվան-
դությունից ապաքինածները կարող են ի-
րենց վրա վոջիկ ունենալ, վորոնց միջոցով
վարակը փոխանցվում ե առողջներին: Նույ-
իսկ դիտակները կարող են վարակման աղ-
բյուր լինել, վորովինետե վոջիները նրանց
վրայից հեռանալով այս և այն կողմ են
ցրվում: Դրա համար հարկավոր ե դիտակը
սավանով փաթաթել, իսկ սավանը նախապես
թրջել 5% (10) կարբույան թթույով կամ լեզո-
լով: Դադաղը պետք է պինդ փակվի:

ԲՇԱՏԻՖԱՎՈՐ ՀԻՎԱՆԴԻ ԲՈՒԺՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԱՄՔԸ

Բծավոր տիֆով բռնված հիվանդին ան-
հրաժեշտ ե հիվանդանոց տեղափոխել վոր-

պեազի նրան հարկ յեղած ողնությունը ցույց
արվի և վորպեսզի նա ուրիշներին վարակել
չկարողանա:

Հիվանդանոցում գործն այնպես պետք է
դրված լինի, վոր նոր ընդունված հիվանդը
վոջիներից իսպառ մաքրվի: Անհրաժեշտ ե
գլուխ ու մարմնի մազուա տեղերի մազերը
կարծ խուզել և մարմնին վոջիլ վոչնչացնող
վորեւ նյութ քսել:

Հիվանդի բոլոր իբերը պետք ե ախտահա-
սել (վոչնչացնել կենդանի միջատներին):
Վոջիների այս վոչնչացումը կատարվում ե
հատուկ սարքավորված սենյակում կամ կա-
մերայում: Վոջիները վոչնչացնելիս՝ պետք
ե միջոցներ ձեռք առնել, վորպեսզի նրանք
այս ու այն կողմ չցըրվեն. մազերը հարկավոր
ե այնպես խուզել, վոր նրանք սավանի կամ
մի հատուկ փուփածքի վրա թափվեն:

Բծատիֆավորների հիվանդանոցներն այ-
ցելել վոչ մի դեպքում չի թույլատրվում:
բժշկական պերսոնալը չպետք ե թույլ տա,
վոր իր վրա վոջիներ անցնեն: Աշխատահ-
րից հետո նրանք պետք ե լողանան:

Հիվանդը կարիք ունի հոգատար խնամքի,
նա պետք ե հանգստություն վայելի. հար-
կավոր ե հետեւել նրա մարմնի, կաշվի ու

բերնի մաքրությանը: Բծատիֆավոր հիվանդին տաք վաննաներ են անում. այդ վաննաները մաքրում են կաշին, բարփռում են արյան շրջանառությունը և հանգստացնում հիվանդին: Վորովհետև հիվանդները համախակի յեն թրջում իրենց տակը, դրա համար նրանց հարկավոր ե շուտ-շուտ լվանալ, սրբել ողիով, անհրաժեշտ ե նոդ տանել բերնի մաքրությանը. վողողելու համար տալ բորբթու կամ մանգանի կալիումի լուծույթ. յեթե լեզուն և շրթունքները ճաքճաքված են, այդ գեպքում հարկավոր ե բերնին զլիցերին կամ վագելին քսել. կարելի յե գործածել նաև կարագ կամ արեվածաղկի ձեթ:

Վորովհետև ծանր հիվանդների մոտ, վորոնք սովորաբար մեջքի վրա յեն պառկում, թոքերի ստորին բաժնում արյունականդ ե առաջանում, դրա համար հիվանդներին ժամանակ առ ժամանակ պետք մեկ կողքից դեպի մյուսը շուր տալ:

Բծատիֆավոր հիվանդների բուժումը հանգում ե այն բանին, վոր նրանց արգում են այնպիսի բուժամիջոցներ, վորոնք հանգստացնում ու պահպանում են սրտի գործունեյությունը:

Այսպես, ուրեմն, մենք տեսնում ենք, վոր

բծատիֆավոր հիվանդը կարեք ունի խնամքի ու բուժման, վորպիսին նա կարող ե ստանալ միայն հիվանդանոցում: Այսպիսի հիվանդներին տանը բժշկելը շատ դժվար է: Դրա համար՝ ուր ել վոր հիվանդության դեպքեր պատահեն, պետք ե այդ մասին անմիջապես տեղեկություն տալ բուժպերսոնալին:

Բայց կարող են պատահել այնպիսի դեպքեր, յերբ հիվանդը տանն ե մնացել: Նման զեպքերում վարակվելու վտանգն սպառնում ե թե՛ տնեցիներին և թե՛ այն բոլորին, վորոնք այցելում են հիվանդին: Դրա համար պետք ե այնպես անել, վոր հիվանդն առողջներից մեկուսացված լինի: Ամենից առաջնանք սովորաբար մաքրել. վոչնչացնել ե հարկավոր նաև նրա իրերի վրա գըտնված վոջիլներին ու, մինչև նրանք իսպառ չկոտորվեն, այդ իրերն ուրիշ տեղ չփոխադրել: Տնեցիներից մեկին պետք ե առանձնացնել, վորպեսզի հիվանդին խնամողը միայն նաև լինի. մյուսները հիվանդին չպետք ե մոտենան:

Սակայն պետք ե իմանալ, վոր տանը խնամվող հիվանդը, նույնիսկ այսպիսի պայմաններում, չափազանց վտանգավոր ե հանդիպանում շրջապատողների համար:

ՊԱՅՔԱՐԸ ԲՇԱՎՈՐ ՏԻԳԻ ԴԵՄ

Հիվանդության, ինչպես նաև նրանով վարակվելու յեղանակների հետ ծանոթանալուց հետո մենք իմանում ենք, թե ինչպես են հարկավոր պայքարել նրա գեմ, ինչպես կանխել բժավոր տիֆովի հիվանդությունները և թե ինչ յեղանակով զլսովին փռչնչացնել այդ հիվանդությունները:

Մեր բոլոր միջոցառումների հիմքում զըրված են վողլոտության դեմ պայքարը. վողիներ վոր չինեն, չի լինի նայեն բժավոր տիֆը:

Սապոնի մատակարակումը բնակչությանը, բաղնիքների, լվացքատների ու սափրատների լայն շինարարությունը քաղաքներում և գյուղերում պետք են ողնի այս պայքարին. բոլոր կոլխոզներում և սովորողներում պետք են բաղնիքներ շինվեն: Բաղնիքը շինվելու յեանցունակ տիպի, այսինքն պետք են ունենահատուկ սարքավորում՝ հագուստեղենի մեջ յեղած վողիները փռչնչացնելու համար (միջատների վոչնչացումը գեղինսեկցիա յեկոչվում): Այստեղ վողիներն ու անիծները ջերմության ազդեցությամբ արագ կերպով՝ 45 րոպեյում — 1 ժամում՝ փռչնչանում են:

Գյուղական բաղնիքները կարող են լինել յերկու տեսակ՝ հասարակ և անցունակ տիպի: Հասարակ բաղնիքներում հանվում են, լվացվելուց հետո, հագնվում են միենալույն սենյակում. հետեւաբար հնարավոր են, վոր հանվելու ժամանակ հատակի կամ նստարանի վրա մնացած վողիները նորից կարող են անցնել լվացված մարդու մաքուր ձերմակեղենի վրա: Անցունակ տիպի բաղնիքներում հանվելու առանձին սենյակ կա, ուր մարդիկ հանում են իրենց հագուստն ու ձերմակեղենը և հանձնում են գեղինսեկտորին (վողլաջարդարանին)՝ միջատները փռչնչացնելու համար. ապա լվացվողներն անցնում են ուղղակի բաղնիքը, ուր լվացվելուց հետո մատնում են հագնվելու սենյակը. դա մի առանձնացած մաքուր սենյակ են, վոր տանում են գեղի զուրս. ահա այս սենյակն են բերում այն ձերմակեղենն ու հագուստը, վորն արդեն անցել են գեղինսեկտորից՝ լողացողի բաղնիքում գտնված ժամանակ:

(Թե ինչպես շինել բաղնիքները և գեղինսեկտորը կոլխոզներում, այդ մասին պատմած եք թ. Գ. Զիատյակովի և ինժ. Ի. Ա. Կերչիկերի «Բաղնիքները, լվացքատները և գեղինսեկտորները կոլխոզներում» գրքույ-

Կում, Պետհրատ, Մոսկվա, 1932 թ. գինը
40 կոպ.):

Բծավոր տիֆի ու նրա փոխազրիչի՝ վո-
ջիլի զիլսավոր թշնամին մաքրությունն ե:
Վոջլոտության նպաստում ե՝ միատեղ, կողք-
կողքի թափած պառկելը, վառարանի ու
թախտերի վրա բնելը, վերմակի տեղ վեր-
նազգեստ գործածելը, վերկենալուց հետո
անկողիները միատեղ դարսելը, ճերմակեղենի
ուշ-ուշ փոխելը, յերկար մագեր և մորուք
թողնելը և այլն:

Վոջլոտության դեմ մղվող պայքարի հետ
միասին մեծ նշանակություն ունի նաև այն,
որ բծավոր տիֆով հիվանդությունն իր
ժամանակին իմացվի, և հիվանդներն առողջ-
ներից անջատվեն, վորպեսզի շրջապատողնե-
րին չվարակեն: Հիվանդի բնակարանն ու նրա
բոլոր իրերը գեղինսեկցիայի յեն յենթարկ-
վում: Հիվանդին շրջապատողները յենթարկ-
վում են սանիտարական մշակման:

Անհրաժեշտ ե բժշկա-սանիտարական հրո-
կողություն սահմանել իջեվահների (պոս-
տոյալը դվոր), հանրակացարանների, կա-
լանքի վայրերի, գաղթականների վրա:

Առանձնապես հոգատար վերաբերմունք և
հարկավոր ցուցաբերել դեպի այն միջոցա-

ռումները, վորոնք բծավոր տիֆի մուտքը
կարմիր բանակը կանխելու համար են գոր-
ծադրվում զորամասերն ուղարկվող զորա-
կոչիկները պետք ե յենթարկվեն սանիտա-
րական մշակման (մագերի խուզում, տաք-
ջրով ու սապոնով լողացում, հագուստեղենի
վրա միջատների վաչչացում):

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպես, ուրեմն, մենք տեսնում ենք, վոր-
բծավոր տիֆի ու նրա տարածման դեմ հա-
ջողությամբ պայքարելու համար նախ և
առաջ հարկավոր ե վոչնչացնել վարակը տա-
րածողներին, այսինքն վոջիկներին:

Վոջիկներն ու նրանց ձվիկները (անիծ-
ները) պետք ե վոչնչացնել՝ 1) մարդու մարմ-
նի վրայից, 2) հագուստի վրայից, 3) ան-
կողնի միջից և 4) բնակարանից:

Դրա համար հարկավոր ե.

Այն շաբաթ լողանալ տաք ջրով ու սա-
պոնով (բաղնիք, վաննա, դուշ):

Այն որ մագերը սանրել:

Մարմնի ու զիլի վրա և կոնատակում վո-
ջիկավահնելիս՝ խուզել մագերը, մաղով ծած-
կված մասերը թացացնել տաք քացախով, կե-

բոսինով, սաբադիլյան թուրմով (վոջիլ սպանող նաստոյկա) կամ ոճառանաֆտով, վորից հետո ամբողջ մարմով լվացվել տաք ջրով ու սապոնով։

Ճերմակեղենը փոխել շաբաթը մի անգամ, բաղնիքից հետո։

Վոջիլ յերեվալու դեպում ճերմակեղենն անմիջապես փոխելու Ճերմակեղենը 10—15 րոպե (ջուրը յեւ գալուց սկսած) լավ յեռացնել ու մոխրաջրով (չչոլոկ) լվանալ, ապա տաք արդուկով արդուկել (ութույել) ճերմակեղենի ու հագուստի ծալքերը կամ մի ժամի չափ ճերմակեղենը թրջել 2% լիզոլի կամ 5% ոճառանավթի մեջ։

Կոշիկները սրբել կերոսինով, սկիզբիդարով և խայծղանով (խաթրանով)։

Հագուստը և անկողնի պարագաները (վերմակ, բարձ և այլն) 45 րոպեյից մինչև 1 ժամ լավ տաքացնել ուստական փուռի մեջ կամ ծծմբով ծխահարել, 1 խորանարդ մետրին 50—100 գրամ ծծումբ այրելով. ծխահարումը պետք ե կատարվի լավ փակված սենյակում կամ շենքում 4 ժամ շարունակ։

Բնակելի շենքերի հատակը, պատերը, կառասիները և այլն լվանալ 2% լիզոլով կամ 3% ոճառակարբույան լուծույթով կամ ամ-

բողջ շենքը ծխահարել ծծմբով, ինչպես վերեվում հիշատակվեց։

Հետեւ անկողնի մաքրությանը, Բծավոր տիֆով հիվանդին տանը չպահելու այլ հիվանդի մասին խսկույն հաղորդել բժըշկական պերսոնալին։

Առողջապահության որգաններին ոգնություն ցույց տալու նպատակով հարկավոր ելուրաքանչյուր կոլխոզում կազմակերպել հասարակայնություն՝ սանիտարական-առողջապահիկ միջոցառումներ անցկացնելու համար։ Այս գործում մեծ դեր ունեն խաղալու սանիտարական ներկայացուցիչները, կոլխոզների առողջապահիկ բջիջները և կուրտուրկենցաղային հանձնաժողովները։ Նրանք պետք ե մորիկզացիայի յենթարկեն կոլխոզնիկներին՝ կեղտոտության դեմ պայքարելու համար։ Նրանք պետք ե ամենաակտիվ մասնակցություն ունենան անհրաժեշտ առողջապահիկ միջոցառումներ անցկացնելու գործում իրենց՝ կոլխոզնիկների ուժերով, առանց մեծ գումարներ ծախսելու։ Այդ միջոցառումների թվին են պատկանում բաղնիքների, վողլաջարդարանների, լվացքատների ու սափառատների շինարարությունները։

Սանիտարական ներկայացուցիչները պետք

և ոգնեն կոլխոզնիկներին՝ հասկանալու, վոր
հասարակական բաղնիքներն ու սափրատներն
ավելի լավ են և շահավետ, քան անհատա-
կանները, վոր նրանց մեջ մաքրություն պահ-
պանելն ավելի հեշտ է, ինչպես նաև ավելի
դյուրին ե սանիտարական հսկողություն
սահմանելը:

Այժմ, յերբ հայտնի յեն բծավոր տիֆով
վարակվելու յեղանակները, մենք հեշտու-
թյամբ կարող ենք պայքարել նրա դեմ:

Բանվորների ու կոլխոզնիկների միջև այս
գիտելիքների լայն արմատացումն աջակցու-
թյուն ցույց կտա առողջպապահության որ-
գաններին բծավոր տիֆի դեմ նրանց մղած
պայքարում և կողնի վերջնակապես վերաց-
նել այս սոսկալի հիվանդությունն ու
վոչնչացնել նրա գլխավոր տարածողին՝
վոյցին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բծավոր տիֆը — ցարական ոեժիմի ժառան- գությունն ե	3
Բծավոր տիֆը Հոկտեմբերյան հեղափոխու- թյունից հետո	6
Հիվանդության փոխադրիչը վոյցին ե	8
Վոյցիների ազրելակերպը	11
Ինչպես ե ընթանում բծավոր տիֆը	14
Բծատիֆով հեվանդի բուժումը և նրա խնամքը	16
Պայքար բծավոր տիֆի դեմ	20
Ցեղակացություն	23



ՀՆԿ. ԸՆԹԵՐՑՈՂ.

Հայտնիր քո կարծիքը այս գրքի մասին նե-
տելվալ հասցեյով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.,
№ 30, Азово-черноморское Краевое
Книгоиздательство, армянская секция.
Նամակները կարելի յեւ ուղարկել առանց
նամակադրումի:

Отв. ред. Г. А. Потенц Пом. тех. ред. Д. М. Джинибалаян

Издание 408/4663 Об'ем 7/8 печ. листа. Статформат А6-105x148.
Умодиралит 00-1429. Тираж 1000 экз. Заказ. 4784. Списано в набор
3|IX-1935 г. Подписано в печать 20|IX-1935 г

Типография им. „Стачки 1902 года“ г. Ростов на Дону.

«Ազգային գրադարան



NL0279892

116/1955
ԳԻՐԸ 25 ԿՈՒ. 6992
Цена коп.

Ա 10312

На армянском языке

ДОКТОР С. Л. КЛЯЧКИН

СЫПНОЙ ТИФ И МЕРЫ
БОРЬБЫ С НИМ

АЗОВО - ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д., Буденновский пр., № 30

ԳՐԱԴԱՐԱՆ
Առաջնա-Դպր, Մասկովյանց, № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԱԿՊԵՆՏՐՈՆ)